# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/12» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Պետրոսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաբաջանյանը, Ռ. Կարապետյանը, Լ. Նահապետյանը, Ա. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. Հայտերի բացման մասին

1.1. Հայտերի բացման.
- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ
-օրը՝ 02.10.2017թ.
-ժամը՝ 11:00

1.2. Ընդունել ի գիտություն, որ **«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/12»** ծածկագրով գնանշման հարցման հրավերին էլեկտրոնային համակարգով /armeps.am/ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Երպետ» ՍՊԸ և «Ատլանտ» ՍՊԸ /կոնսորցիում/ |
| 2 | «Զորաշեն» ՍՊԸ |

1.3. Մասնակիցի կողմից՝ «Զորաշեն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են, կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերը թերի են, մասնավորապես՝ ներկայացված հայտում բացակայում են հավելվածներ 2, 2.1, 3 և 4:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.4. «Զորաշեն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.5. Գնային առաջարկի ամփոփում ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային արժեք | Մասնակցի անվանումը | |
|---|---|---|---|---|
| | | | «Երպետ» ՍՊԸ և «Ատլանտ» ՍՊԸ /կոնսորցիում/ | «Զորաշեն» ՍՊԸ |
| | | | Գնային առաջարկ առանց ԱԱՀ | Գնային առաջարկ առանց ԱԱՀ |
| 1 | Տեղեկատվության աջակցության և սպասարկման համար | 9600000 | 7825000 | 8166000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նախատեսված կրպակի ձեռքբերում /տեղադրումով/ | | | |

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.6 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ այն է՝ վերջինիս կողմից ներկայացված հայտում բացակայում են հավելվածներ 2, 2.1, 3 և 4, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետով որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել է կոնսորցիումին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընդունել որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | [signature] | Հ. Պետրոսյան |
| Անդամներ՝ | [signature] | Հ. Բաբաջանյան |
| | [signature] | Ռ. Կարապետյան |
| | [signature] | Լ. Նահապետյան |
| | [signature] | Ա. Հովհաննիսյան |
| Քարտուղար՝ | [signature] | Գ. Մուրադյան |